160 Մեղքի մեջ եմ ես ապրել,

1. Մեղքի մեջ եմ ես ապրել,
Վիշտ ու ցավ եմ միշտ կրել,
Չեմ իմացել հավիտենության մասին:
Բայց Հիսուսը գտավ ինձ,
Ազատեց կապանքներից,
Լի եմ հիմա ուրախությամբ երկնային:
Ես ազատ եմ (3)
Կապանքներից ու մեղքից:
Բայց Հիսուսը գտավ ինձ,
Ազատեց կապանքներից,
Լի եմ հիմա ուրախությամբ երկնային:

2. Հոգին սովորեցնում է,
Եվ Աստծո Խոսքն ասում է,
Որ Հիսուսը կյանք է տալիս բոլորին,
Երկնքից Աստծո սերը
Եվ Սուրբ Հոգու կրակը
Ուղարկում է հոգով տկար թույլերին:
Աստծո սերը (3)
Ուղարկում է բոլորին:
Երկնքից Աստծո սերը
Եվ Սուրբ Հոգու կրակը
Ուղարկում է հոգով տկար թույլերին:

3. Եթե տկար ես հոգով,
Նրան դիմի՛ր աղոթքով,
Նա կվերցնի քո տկարությունները,
Իսկ մարմինը, թե տանջվի՝
Բժշկություն կգտնի,
Միայն Հիսուսով է բժշկությունը:
Սուրբ արյունը (3)
Բուժում է քո վերքերը:
Իսկ մարմինը, թե տանջվի
Բժշկություն կգտնի,
Միայն Հիսուսով է բժշկությունը:

4. Տե՛ս, թզենին ծաղկել է,
Ծուտով Տերը գալու է,
Որ աշխարհից տանի իր հարսնացուին,
Որ ցավերին վերջ լինի,
Մեծ ուրախություն լինի,
Դիմավորելու պատրա՞ստ ես Հիսուսին:
Դու պատրա՞ստ ես (3)
Թողնելու այս աշխարհը,
Որ ցավերին վերջ լինի,
Մեծ ուրախություն լինի,
Դիմավորելու պատրա՞ստ ես Հիսուսին: